



Press Release

Ազգային Առաջնորդարան Ատրպատականի Հայոց Թեմի - Թաւրիզ
Armenian Prelacy of Azarbaijan P.O.Box: 51355-4455 TABRIZ - AZARBAIJAN IRAN
E-mail: arajnordan.tavriz@gmail.com Tel.: +98 41 355 535 32 Fax: +98 41 355 423 04

«ՉՈԳԻՈՑ»՝ ՄԱՍՏԱԿԱՆ ԳԻՒԴԻ ՀԱՅՈՑ 500-ԱՄԵԱՅ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆՈՒՄ

Ատրպատական, Ազգային Առաջնորդարան – Թեմի անշարժ գույքի իրավիճակը ստուգելիս, իւրայատուկ կարգավիճակում են յայտնուում բազմաթիւ հայկական գերեզմանատները Ատրպատականի տարածքում, որոնց ցուցակագրման աշխատանքը եւս ստանձնել է Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթեանը: Առաջնորդ Սրբազանը Երկուշաբթի 14 Մարտ 2016-ին, այցելեց Սոմա գաւառի նախկին հայկական Մաստական գիւղի հայոց 500-ամեայ գերեզմանատունը, պատրաստելով տեղագրական սոյն ուսումնասիրութիւնը, որը ներկայացնում ենք ստորեւ, իր գրչով:

Թաւրիզից ճանապարհուելով, ամենից կարճ ճանապարհով Սոմա գաւառը հասնելու համար, պէտք է անցնել Սալմաստից, գնալով դէպի Ուրմիայի ուղղութեամբ: Ապա, Մասանեանների թողած ժայռափոր արձանագրութիւնների հանդիպակաց կողմից մի քանի ժամ բարձրանալ լեռները, որոնց գագաթներին է հանգչել Սոմա գաւառը իր մի քանի տասնեակ գիւղերով: Լեռնային ոլորապտոյտ ճանապարհով պէտք է անցնել, որը յոգնեցում է ճամբորդին, շուրջ երկու ժամ ճանապարհի գնալուց յետոյ:

Նախկին հայաբնակ Մամաքան գիւղից անցանք, մեր յոյսը կորցնելով այնտեղ հայկական եկեղեցու կամ գերեզմանատան հետքերը գտնելու: Գիւղացիները չէին ուզում գործակցել մեզ հետ, զգալի վախ արտայայտելով մեզ՝ անծանօթներիս նկատմամբ: Իսկ մենք, ուրիշ առիթի թողելով Մամաքան գիւղի մասին մեր ուսումնասիրութիւնը, ցանկացանք մեր ժամը տրամադրել կողքի Մաստական գիւղին, որտեղից մի 150 տարի առաջ վերջին հայն էր դուրս եկել, կամ էլ՝ այնտեղ թաղւել, փակելով գիւղի հայկական լինելու տարաբախտ պատմութեան էջը:

Մաստականը, Իրանի քրդերով բնակւած շրջաններից է: Պարսկերէն կամ թուրքերէն խօսակցութիւն դժւար թէ լսի այցելողի ականջը: Քուրդիստան այցելելու փոխարէն կարելի է այս շրջանները այցելել, որտեղ առօրեայ խօսակցական լեզուն եւ տներում եւ փողոցում՝ քրդերէնն է:



«Յոգուոց» Մաստականի գերեզմանատունում



Գիւղի տները մօտենում են գերեզմանատան տարածքին

Ճանապարհից մեզ ընկերացած մի քուրդ տարեց մարդ, առաջնորդեց մեզ հայոց գերեզմանատան վայրը, որը գիւղից մի քիչ դուրս, ճանապարհի եզրին, լեռան լանջին լինելով, ամէն օր տեսնում էր այնտեղից անցուդարձ անելով, եւ քաջատեղեակ էր, թէ այն «գիւղի նախկին տէրերի՝ քրիստոնէայ հայերի դարաւոր գերեզմանատունն է»:

Գերեզմանատան ընդհանուր տարածքը, դեռ չհաշւած կողքի տների սահմանները, որոնք «բնականաբար» անտէր հողաշերտից բաժին էին վերցրել, շուրջ 8.000 քառ. մետր է այսօրայ վիճակում, շեղակի փռւած լեռան բարձրագոյն գագաթի արեւմտեան կողմի զառիթափին: Այսօրայ ըմբռնումով գերեզմանատան նմանութիւն չունի սոյն տարածքը, որը արդէն շուրջ 500-ամեայ գերեզմանատուն է համարւում, երկրի մշակութային ժառանգութիւնների հիմնարկութեան հսկողութեան ներքեւ գտնւելով: Այստեղ գրաւոր արձանագրութիւններ չկան յղկւած քարերի վրայ, ո՛չ էլ կոփւած տապանաքարեր...: Այլ՝ սոսկ ժայռաբեկորներ են զետեղւած ննջեցեալների թաղւած տեղում: Մաստականի հայ գիւղացիները այսպէս էին անում, չկորցնելու համար իրենց հարազատների թաղւած տեղի յիշողութիւնը, միաժամանակ հանգուցեալի թաղւած տեղը ոտքի կոխան դառնալուց փրկելու եւ դիակախոյձ բորենիների կրկտումից դրանք ազատելու նպատակով:

Քարերը շուրջ մէկ կամ մէկուկէս մետրանոց երկարութիւն եւ կէս մետրանոց լայնք ունեն: Լաւագոյն դէպքում այդ ժայռաբեկորներից ոմանք, գլխակողմում աւելի բարձր բաժին ունեն, որով զատորոշւում են միւսներից: Այս մասը, քարից սարքած մի բարձ դրած լինելու տպաւորութիւնը կը տայ նայողին:



Մաստականի Գերեզմանատունը՝ լեռան թեք կողմին



Գլխատեղում «բարձ» ունեցող տապանաքարերից

Գիւղը ունեցել է Սբ. Բարթուղիմէոս անունով հողաշէն եւ փայտածածկ եկեղեցի, 17-րդ դարի կառոյց: Դժբախտաբար օրը երեկոյացած լինելուն, պէտք է շուտով վերադառնայինք: Ուստի եկեղեցու չափագրունը թողուցինք մեր յաջորդ այցին: Ի դէպ, գիւղացիները ասում էին թէ երկու եկեղեցու աւերակներ գոյութիւն ունեն գիւղում: Հաւանաբար նրա կողքում մի այլ կառոյցի՝ դպրոցի կամ հովւատան մասին էր նրանց ակնարկը, սակայն ստոյգ չէին իմանում թէ երկրորդ կառոյցը ի՞նչ էր, եւ դա էլ եկեղեցու աւերակ էին անուանում: Յամենայն դէպս, մեր յաջորդ այցին վստահաբար կը պարզենք Սբ. Բարթուղիմէոսի եւ այն միւս աւերակի մասին ասւածները:

Գերեզմանատան մէջտեղում կանգնած, դրա հարեւան քուրդերի հետաքրքիր նայւածքների ներքոյ «Հոգւոց» ասացինք այնտեղում հանգչող մեր նախահայրերի հոգիների խաղաղութեան համար, որոնցից ոմանց ժայռաբեկոր տապանաքարերը կիսով չափ խրել էին հողում եւ գրեթէ ծածկւել: Մտածեցինք, երեւի աւելի լաւ է այդպէս «պահւեն», քան՝ տեղափոխւելով այլ նպատակի ծառայեն դրանք: